ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հոկտեմբերի 2023թ. թիվ 500-Ա

«ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ, հաշվի առնելով նույն որոշման հիման վրա համակարգչում նախօրոք զետեղված ու համակարգչի կողմից պատահական ընտրված 4 թեկնածուների ցուցակը և ՀՀ առողջապահության նախարարի 29.09.2023թ. թիվ ԱԱ/05/21494-2023 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Թումանյանի առողջության կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 04.10.2023թ. ժամը 11:00-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Գոռ Ասրյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Ռուզաննա Պողոսյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

02/10/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 2
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. հոկտեմբերի 2-ի
թիվ 500-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Թումանյանի առողջության կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի

ԿԱԶՄ

Գոռ Ասրյան	- ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ
Ռուզաննա Պողոսյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Արուս Թումանյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Կարինե Ադամյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ
Կարինե Գաբրիելյան	- ՀՀ առողջապահության նախարարության հանրային առողջության բաժնի պետ
Ռուզան Մարտիրոսյան	- ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ
Անժիկ Հովհաննիսյան	- ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի տնօրեն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

02/10/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ